

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ



ԹԻ 6



7 ՓԵՏՐՎԱՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մամուրեանի կեանքէն (Իր մահուան չորրորդ տարեկիցին առթիւ) Ղ. ՎԱՐՊԵՏԵԱՆ. — Վա-
ռարանիս անկիւնէն. ՄԵՆԱՍԵՐ, — Խորդենիին մահը (Քմայք) ԽՈՍՐՈՎ. ԳԷՆԵՆԵԱՆ. — Ա-
մանորը Սանասարեան վարժարանին մէջ. «Հին Եւ Նոր Տարի». ԿՈՐԻՒՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ. —
Մեղքին պատիժը (Նորավեպ) ԱՐԱՔՍԻ. — Եկո՛ւր, աղուոր (Սիրերգ) ՎԱՐԴԳԵՍ. — Աղջկան մը
օրագրէն Բաղուած. ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ. — Քաղաքական աշխարհ. — Խմբագրական
Նօթք.

Յաջորդ թիւով պիտի հրատարակել սկսինքն շաբեկան վեպ մը, մեր կեանքէն, ՊՈԼ-
ՍԱՀԱՅ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. հեղինակութեամբ ծանօթ ու համակերելի գրագէտի մը՝ Շ.
ՇԱԽԱՐՇԻ, որուն գրուածքները մեծ հանդիմանով կ'արագուած են միշտ «Արեւելք»ի ու «Մա-
սիս»ի մէջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար՝ ԲԱՆԱՆՈՒՆՆԵՐԸ.
Եւ գաւառներուն համար՝ ԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ, կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Զրանք՝ կամ
5 Բուլլի: Թղթատարական ծախսը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է խնդրեն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առա-
կութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ՝ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայ-
մաններով:

Ձեռն-ԲԷ ԿԸ ՇԱԽԱՐՇԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Rédaction de la Revue MASSIS

Կ. Պոլիս, Ղալաթիա

Galata, Constanti nople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԵՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոյժգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէնկողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիդի՝ Օրէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօստոյի, Թուլուզի, Լիօնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիօնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպորտիւթիք, Հալլը-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց, ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւններ:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր կազմական կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիդի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:
Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances générales Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ. — Պօլիս, Մահմուտ փաշա, Պէոյի ք. Երլորդ խան, թիւ 14, Լա Գօնֆիանս ա. պահովագր. ընկ. Գրասենեակը:

Գրանիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը հղող անքիֆաի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Հաֆաֆլար, թիւ 46, ուր գաւառներէ առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 182-8 1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ք Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ զրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Ք Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակաւցոյց՝ գեղջեալ գինեւով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո'ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիւններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքիոնի ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբանութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաշխման (accumulation des bénéfices) ՅՈՒՒ եւ ՎՆԱՍՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

ԹՈՒՐԿԻՅ ԵՒ ԱՐԵՎԵԼՔԻ ՏՅՈՒՆՈՒՅԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Քաթրեք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինյայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԶԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկահան Դեսպանատան

Բերա, Մեծ Փաղոց, Թագսիմ, քիւ 61

Զրահեան աքաղաղման

Պալապիւսան ամէն օր աղաղի ամէն տեւակ հիւանդութիւններով տառապողներն կ'ընդունի. իսկ Ուրբաթ, կիրակի եւ երեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիւրբուսան օր եւ է ժամուն կարելի է գիմել: Պալապիւսան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած աղաղանքը: Յորեկները աղաղ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղխանեալն ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեւակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, Թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 չաբաթական վճարում. կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապագիկ գնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ՀԻՒՆԴՈՒԹԻՈՒՆԷ ՎԵՐՋԸ՝ ԶՕՐՈՒԹԻՈՒՆ

Երբ տենդեր և երկայն հիւանդութիւններ և անհանգստութիւններ որոնք մարմինը տկարացուցած և ընդհանուր անդօրութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդո զօրացուցիչ բանի մը կարօտ է որ զինքը շուտմը կատարեալ առողջութեան հասցընէ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մըն է և իրեն հաւասարը չիկայ: Ասիկայ թէ անորժակ կուտայ և թէ մար- սողութիւնը կը շտապէ. Մարմինը կը զարգացընէ և նոր հարուստ արիւն կուտայ, կենսաղութիւնը կը վերականգնէ և հիւանդութեան դիմագրեւում համար ընդհանուր դրութեան զօրութիւն կուտայ: Ըստթի Բաղադրութիւնը թէ կե- րակուր և թէ դեղ է. և տկարացած դրութեան մը կարօտ եղած միս և զօրութիւնը առատապէս կը մատակարարէ. և ասոր անհամար օգտակար գործողութիւնները ստուգիւ զարմանալի են: Անտարակոյս մեծ վտանքի մէջ գրութիւնը երբ միս և զաւալ կը կորսնցնէ և հետեւապէս շուտմը այնչափ կը տկարանայ որ հիւանդութիւններու դիւրաւ զոհ կ'ըլլայ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր կերակուրներու զօրութիւնը կը պարունակէ, որժի վատնումը կը դադրեցնէ և առողջատես միս կը կազմէ: Ընդ միշտ վարդապոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը գտնուի:

Հիշերու վրայ ասոր ուշա- գրութիւնը ընել պէտք է:

25

Բոլոր բեղաբորձները և բեղալծաւները ին ծախեն:

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցման քուակի հիւղեր

VICTORIA ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
DE բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
ERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ.
Բուն վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կուենան,
սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 190 թին Ֆր. 1,244,457,577

Պանենսի դրամ 190 թին » 451,284,214

Հաստատած 1853 սեպտ. 20 ին ար-
քայակ սն հրովարտակով եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քէ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանքա
եւ Քրետի Լիոնէ

Լիպգոր Բնդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԴԱԼՖԱՅԵԱՆ

Տեսուչ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ

Պոլիս Քաթրնքոլու խան
թիւ 45 եւ 45 Կ

ՄԱՍԻՔ


54-րդ ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 6

7 ՓԵՏՐՎԱՐ 1904

ՄԱՍՈՒՐԵԱՆԻ ԿԵԱՆՔԵՆ

(ԻՐ ՄԱՆՈՒԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ)



Իզմիրցի Հայը իր գրական մեծագոյն յատկացնելու համար. Մեսրոպեան վարժա-
րանէն Հռիփսիմեանը, և այսպէս անընդհատ,
երկու դարոցներն ալ պէտք ունէին Շահ-
նուրի սրատես աչքերուն հսկողութեան: Յե-
տոյ իրիկուն, մասնաւոր դասեր ընտանիք-
ներու մէջ, ժամ մը հոս, ժամ մը հոն, վեր-
ջապէս տենդագին շարժում մը, մաշեցնող
յոգնութիւն մը որոնց կուրծք կուտար Մա-
մուրեան իր յարատեւող հոգիին անսպառ
ուժովը:

Արեւ. Մամուլ այն ատեն իբր ամսաթերթ
կը հրատարակուէր, որու միակ խմբագիրն
էր ինք՝ պատահական աշխատակիցներու փոք-
րիկ թիւ մը միայն ունենալով իր շուրջը ո-
րոնցմէ շատ բան չէր կրնար սպասել ապա-
հովտպէս, որով իրեն կը մնար լեցնել թեր-
թին ստուարագոյն մասը: Ու գիշերը,—հան-
դասութեան հանգրուանը,—ցերեկուան ծանր
ու բարդ գրադումներէն հազիւ աղատած՝
նորէն կը ստիպուէր գործի սկսիլ, այս ան-
գամ կանթեղին լոյսին տակ, գրիչը ձեռքը,
ժամերով: Եթէ պահ մը Պրեւ. Մամուլին
համար խմբագրական մը կը պատրաստէր,
պահ մըն ալ իր միտքը մինչեւ Կ. Պոլսի կը
ճամբորդէր, հոն Պատրիարքարանի գործե-
րուն շուրջ կը թեւածէր և հաճախ «Շահնուր»ն
էր որ կուգար իր հրամարտ ու հիւթեղ ոճովը
պատկերացնել դէպքերուն ու դէմքերուն ա-
մէնէն աչքառունները. յետոյ իզմիրի առանին
գործերը կը մտաբերէր, կը քննէր, կը դա-
տէր և «Սիսակ»ին խօսեցնել կուտար. ու
վերջապէս օրուան գրքերուն ձեռք կը դա-
նէր, մեր և օտար գրականութիւնները կ'ու-

յաճախէր և համար. Մեսրոպեան վարժա-
րանէն Հռիփսիմեանը, և այսպէս անընդհատ,
երկու դարոցներն ալ պէտք ունէին Շահ-
նուրի սրատես աչքերուն հսկողութեան: Յե-
տոյ իրիկուն, մասնաւոր դասեր ընտանիք-
ներու մէջ, ժամ մը հոս, ժամ մը հոն, վեր-
ջապէս տենդագին շարժում մը, մաշեցնող
յոգնութիւն մը որոնց կուրծք կուտար Մա-
մուրեան իր յարատեւող հոգիին անսպառ
ուժովը:

Արեւ. Մամուլ այն ատեն իբր ամսաթերթ
կը հրատարակուէր, որու միակ խմբագիրն
էր ինք՝ պատահական աշխատակիցներու փոք-
րիկ թիւ մը միայն ունենալով իր շուրջը ո-
րոնցմէ շատ բան չէր կրնար սպասել ապա-
հովտպէս, որով իրեն կը մնար լեցնել թեր-
թին ստուարագոյն մասը: Ու գիշերը,—հան-
դասութեան հանգրուանը,—ցերեկուան ծանր
ու բարդ գրադումներէն հազիւ աղատած՝
նորէն կը ստիպուէր գործի սկսիլ, այս ան-
գամ կանթեղին լոյսին տակ, գրիչը ձեռքը,
ժամերով: Եթէ պահ մը Պրեւ. Մամուլին
համար խմբագրական մը կը պատրաստէր,
պահ մըն ալ իր միտքը մինչեւ Կ. Պոլսի կը
ճամբորդէր, հոն Պատրիարքարանի գործե-
րուն շուրջ կը թեւածէր և հաճախ «Շահնուր»ն
էր որ կուգար իր հրամարտ ու հիւթեղ ոճովը
պատկերացնել դէպքերուն ու դէմքերուն ա-
մէնէն աչքառունները. յետոյ իզմիրի առանին
գործերը կը մտաբերէր, կը քննէր, կը դա-
տէր և «Սիսակ»ին խօսեցնել կուտար. ու
վերջապէս օրուան գրքերուն ձեռք կը դա-
նէր, մեր և օտար գրականութիւնները կ'ու-

սուսմասիրէր և այս անգամ կըստորագրէր «Ապրտամ»: Ու հոն, այդ անգորր ու մեկանաբայր միջնոլորտին մէջ, բազմոցին ծայրը անխօսուկ կին մը նստած էր, Մամուրեանի կենակիցը, որ,—ինչո՞ւ չըսեմ հոս անգամ մըն ալ,—հանգուցեալ գրագէտին կինը եղած օրէն, եղա՛ւ նաև անոր մտերիմ բարեկամը ու խորհրդատուն. յաճախ ան ալ մինչեւ ատաւօտեան ժամերը կը մնար անոր հետ, որովհետև Մամուրեան կը նախընտրէր անգամ մը իր կնոջը կարգալ իր գրութիւնները, մանաւանդ այն պարագաներուն՝ ուր ինքը յուզուած ու զայրացկոտ ո՛ր եւ է խնդրոյ մասին կիրքով գրիչը ձևաք կ'առնէր: Ազնուահոգի Տիկին Մամուրեան իր մեղմանոյ խօսուածքով ու մտացի գաղափարներով ստէպ պատճառ կ'ըլլար մեղմելու անոր բարկութեան թափը և մասամբ թեթեւցնելու խիստ ու կծու քննադատութիւնները:

Այսօրինակ տքնութիւններով է ահա որ Մամուրեան իր թերթը հրատարակ կը հանէր: Ու մտածել որ անիկա շահու ահնկալութիւններով տոգորուած չէր որ այնքան դոհողութիւններու կ'ենթարկէր ինքզինքը, վասն զի նիւթապէս վնասուած է անկէ շատ անգամ, շնորհիւ իր անկեղծ, յանդուգն ու խայթող բնաւորութեան, որով անվերապահ ու խիզախ գրչով մը կը ձաղկէր, կը քննադատէր, գիմակներ վար կ'առնէր, կը պախարակէր, անտեսելով բոլոր անխուսափելի հետեւանքները իր այդ ընթացքին որոնցմէ ինքը կը տուժէր սակայն: Այլ եւ այլ հրատապ խնդիրներու առթիւ Աբել. Ն'ամուրեանը ամբողջ արցակներ կը վերադարձուէին իրեն, բաժանորդներու թիւը կը կիսուէր, որովհետև ինչպէս որ տակաւին կը շարունակուի այս յոռի սովորութիւնը՝ այն ատեն ալ մեր թերութիւնները մատնանշող թերթերը մերժելուն մէջ կը դանդինք սրտի գոհունակութիւն մը, ինչ որ գուհիկ վրէժ. խնդրութիւն մըն էր և ամէնէն տխրահոգակ յայտարարութիւնը մեր մտածելու կերպին ողորմելիութեան:

Եւ այսպէս, Մամուրեան մաշեցնող հոգերով շարունակած է իր թերթը մինչև իր

մահուան օրը, 30 տարի. և մանաւանդ ինքը իր սկզբունքներուն կառչած՝ տեսչութեան և դասատուութեան շնորհիւ վաստկածին մէջ մասը սիրով կը յատկացնէր իր թերթին յարատեւութեան, հատուցած շունչին արդիւնքը իր գրչի հարուածներով կը փշրէր կ'անհետացնէր: Կը սիրէր իր թերթը կրքուն գինով սիրահարի մը պէս,—ինչպէս հայրը կը գուրգուրայ իր անառակ որդիին վրայ ներելով անոր ամէն յանցանք,—ու աչք կը գոցէր անկէ առաջ եկած վնասին, կը քաշէ անսայթաք, լրագրութեան սիրոյն, գրակա, նութեան սիրոյն, առողջ ու անկեղծ գաղափարներու սիրոյն:

Գործունէութեան այս յուզումնալից շքրջանին մէջ, աշխատութեան հերոսի մը անըման զօրութիւնովը՝ միւս կողմէ ժամանակ կը ստեղծէ հեղինակութիւններ, թարգմանութիւններ, դասագրքեր ալ պատրաստելու: Հոս է որ ալ մեր հիացումը իր ամէնէն բարձր աստիճանին կը հասնի ու կը սքանչանաք իր վրայ:

Այսօր անգամ մըն ալ շեշտելով Մամուրեանի այլազան արժանիքները, անոր անհունէր հոգիին տաժանքները զոր կրած է իրեններուն բարոյական ու մտաւորական առաջադիմութեան համար, մերնպատակը շեշտել է նաև տխուր, խիստ տխուր ճշմարտութիւն մը որ իրր ամէնէն ամօթալի անարդանքը՝ մեր ամենուն երեսին նետուած՝ այսօր կա՛յ ու կը մնայ:

Ո՛ւր է Մամուրեանի Մահարձանը...: Ի՞նչ պիտի ըսէ վաղուան ուղեւորը երբ իզմիրէն անցած պահուն այցելել ուղէ մը գերեզմանատունը՝ հոն Մամուրեանին մահարձանը տեսնելու համար...: Չորս տարի և այն մարդը որ իր ամբողջ կիսանքը իրեն ներուն նուիրեց, տակաւին դուրկ կը մնայ վերջին արժանաւոր յարգանքէ մը:

Շահնուրի մարմինը ալ մը հողի տակ թաղուած կը մնայ այսօր, խարխուլ ու փրկուող հողախոյտ մը ունի իրեն իրրև մշտական դամբարան. հո՛ղ սակայն, լքուած ու մենաւոր այդ հողախոյտին վրայ մեր ապաշնորհ հոգիներուն ուրուականը կարծես մեղ կը

դիտէ և մենք տակաւին չենք յուշաբե-
րեր... Անցողակի կարելի չէ չյիշել նաև
հէ՛ք Տիգրան Չուխանեանը որ չունե՛ցաւ
տակաւին իր յիշատակարանը: Մինչև որ մեր
գրականութեան ու երաժշտութեան այդ վար-
պետներուն մահարձանները շինուին՝ անոնց
ոսկորները ամէնէն տխուր ողբերգութիւնը
պիտի հիւսեն, ամէնէն տրամաթախիծ ու
գոթիային երաժշտութիւնը պիտի ողբերգեն
և անոնց նկատմամբ մեր անտարբերութեան
անդրին գոյներու ամէնէն սեւովը ու ահա-
ւորովը անխախտ պիտի մնայ:

Պէրպէրեան եղաւ միակ անձը որ ծափա-
հարելի մտածողութեամբ մը իր յորելեանին
օրը Մամուրեանի մահարձանին շինութեան
համար յատկացուց 25 ոսկի. այս ցայտուն
օրինակը սակայն չունեցաւ հետեւողներ: Եթէ
ամօթ մըն է ասիկա մեր համայնքին համար
ընդհանրապէս, կրկնապէս և անհունապէս
խոշոր ամօթի բաժին մը կ'իյնայ Իզմիրցիներ-
ուն վրայ որոնց գրկէն էր Մամուրեան և
որոնց համար շատ աւելի աշխատած, որոնց
ղաւակներուն կրթութեան ու զարգացումին
համար տքնած էր. հետեւապէս այս վերջին-
ները մանաւանդ պէտք չէ որ դեղեւէին մինչև
այսօր կատարելու բարոյական պարտաւորու-
թիւն մը որ ամէն բանէ առաջ նուիրական
է: Ինքնաճանաչ համայնք մը իր մտաւորա-
կան բազմադիւն աշխատաւորներուն ճշմա-
րիտ արժէքը պէտք է գնահատել գիտնայ և
զանոնք իրը հայր ընդունելով օր մը երախ-
տապարտ զաւակի մը պէս յաւերժացնէ ա-
նոնց յիշատակները: Յաւերժացնել անոնց
խնկելի յիշատակները՝ նոյն իսկ իր ար-
ժանապատուութեան և ընտիր զգացումներու
տրտայայտութեան նուիրագործումն է:

Անշուշտ հեռու չէ այն օրը ուր Մամուր-
եանի որդին իր սիրական հօր վրայ շիրիմ մը
պիտի կանգնէ Պէրպէրեանի գումարին վրայ
ինքն ալ իր կարողութեանը չափով բան մը
աւելցնելով. բայց ըսել իսկ աւելորդ է թէ
հակառակ իր փափաքին, անիկա չպիտի կա-
րենայ շինել այն փառաւոր ու շքեղ մահար-
ձանը՝ որուն այնքան արժանի է իր ողբալի
հայրը: Եթէ մենք չկատարենք այս գործը,

ապագային մէջ երբ օտարական Հայեր գան
այցելել Իզմիրի Հայոց մահաստանը և հոն
հոյակապ դա՛բարանի մը առջև բերել ուղեւ
իրենց յարգալիլ անհաճանքը, ի զուր պիտի
թափառին մեռելաբոյր այդ տխրավայրին
մէջ և յուսախափ՝ արցունքի ինքնահոս կա-
թիլ մը պիտի իյնայ իրենց աչքերէն ու ափ-
սոսալով պիտի մեկնին գլխահակ:

Ղ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

Իզմիր

ԵԿԱԴՐ ՍՂՈՒԹՈՒՆ...



(Ս Ի Բ Ե Գ)



Երազներուս եւ հասցընող սենչերուս
Ըսուեաժուփ երկիմֆին վրայ, դեռ երեկ,
Գիծովցընող խոսուժներով լիայոյս,
Հեծախաւոր աչներուդ հուրն՝ իր բեկբեկ
Սառսուժներով կը պըսուկէր, դեռ երեկ:

Սիրակաւոս հրաշյրֆով մը, դեռ երեկ,
Հոգիիդ բոցն էիր դըրած դիմֆիդ վրայ,
Յոյսը սալով իմ մըխացող սրժիս հեֆ,
Յոյսն անպատում հեծանքներուն անլիզայ.
Ինչէ՞ն այսօր սիրքս կ'ըլլայ յուսաբեկ

Թարթիջներուս ծայրն ակամայ արցունքի
Կըզզամ կայլակն որ կը յայնճայ յամրօրէն,
Դուրս պօռքկայլու հակալեհ. այլ ո՛չ ոքի,
Կը բանամ ցաւս, ու սիրոյ սուր փուշերէն
Սիրսս՝ արիւնոս՝ վիշտերու տակ կը կըբի:

Եկո՛ւր, անգութ, բու սիրաբոյր անկիւնեդ
Ուր չի հասնիր պաշտամունքիս մեղեդին.
Եւ սիրակոծ ու վշտայոյզ սրժիս գեթ,
Շնորհէ, ա՛հ, երջանկութեան կայծ մ'յետին:
Եկո՛ւր աղո՛ւոր, բու սիրաբոյր անկիւնեդ:

Վ.Ա.Բ.Գ.ՅՍ

ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՒՆԷՆ

ԲԵՐՄ, 2 Փետրվար 1904

Երկուշաբթի

Բարեկենդանի այս զուարթ օրերուն մէջ, ուր պարահանդէսները իրարու կը յաջորդեն և գլխավարները կը վխտան Բերայի չխտակ ճամբուն վրայ մանաւանդ, կը զարմանամ որ տակաւին չերեւցան պայմանագրական յօդուածները զորս ամէն տարի, այս եղանակին, կարգ մը զրոյներ կը մարտնչեն մեզի, — զիմակի փոխարեութեան յախտեան կան յանկերգը կրկնելով: Գրական ոգլմտութեան պղտիկ նշան մը կը համարիմ, իմ մասիս, այս երեւոյթը մեր լրագրութեան մէջ, ուր հինը իբրեւ նոր չիքշելու խղճմտութիւնը հազուադիւրս առաքինութիւն մը կը դառնայ երբեմն, ինչպէս՝ օրինակի համար՝ տարիներ առաջ սպոլեած ոտանաւոր մը կամ յօդուած մը, որ ծանօթ ստորագրութիւն մը կը կրէ, առնել հրատարակել՝ այնպէս հաւատացնելով ընթերցողի երուն թէ նոր գրուած է: 1903 տարեշրջանին մէջ ասոր մէկէ աւելի օրինակները չի տեսներ միթէ չաբաթաթերթի մը մէջ:

Վերջացող տարուան մեր լրագրական գրականութիւնը, ընդհանուր կերպով, բաւական զբաղեցուց գրիչները և յոգնեցուց միտքերը, Յովհ. Գաղանձեանի գրական Տեսութեան շուրջը զոր հրատարակեց Մասիս: Թողով Բարեկենդանը զբօսասէրներուն, այս անգամ պիտի զբաղիմ այդ չեղօք ու ձեռնհաս գրուածքին առթիւ յարուցուած գրավէճերովը, անձնական նկատումներէ թելադրուած:

Որչափ աւելի կը մօտենայ Իզմիրի առաջնորդական ընտրութեան թուականը՝ այնքան աւելի կը հեռանայ Բարգէն վարդապետ այն ատելութենէն զոր ատեն մը կը սնուցանէր Պոլսահայ լրագրութեան դէմ: Հիմակ, ընդհակառակը, սկսած է տեսակ մը դարպաս ընել կարգ մը թերթերու, ամէնէն աւելի կարգացուածները Իզմիրի մէջ: Երբ

Բարգէն վարդապետ կ'ըսեմ, ներկայ պարագային մէջ պէտք է հասկնալ «Շահնուրի բարեկամը» որոնք հոմանիշ են, ինչպէս կը հաստատուի իրադէկներու կողմէ:

Այս անգամ, Մասիսը և Յովհ. Գաղանձեանն են որ առարկայ կ'ըլլան «Շահնուրի բարեկամ»ին դատաւիետութիւններուն, քանի որ անոնցմէ մէկը՝ իբր գրական չաբաթաթերթ և միւսը՝ իբր բանասէր գրող մը, յաւակնութիւն չեն կրնար ունենալ թէ որ և է ազդեցութիւն գործելու սահմանուած են Մեղիքիսեղէկ Սրբազանի յաջորդին ընտրութեան գործին մէջ: Մանաւանդ որ, Մուշի Նախկին Պատր Փոխանօրդը, իր գրչին առեւած նոր ուղղութեամբը, մէկ քարով երկու թռչուն որսալու հնարագիտութիւնը կ'ունենայ, այսինքն միեւնոյն ատեն քծնիլ օրաթերթի մը որուն անունը տալու կը խորշէր զեռ հազիւ տարի մը առաջ:

Բարգէն վարդապետ ինքն օլ իր գանգատի բաժինը կը բերէ՝ Յովհ. Գաղանձեանի «Տարեկան Գրոյթիկ»ին դէմ. առարկելով թէ կարգ մը կարեւոր մոռացումներ եղած են այդ գրական տեսութեան մէջ, օրինակի համար... Բարգէն վարդապետի ուսումնասիրութիւնները Հայոց Կաթողիկոսական օժութեան հաստատման ժամանակին վրայ, Կրօնի ու Հրապարակագրութեան վրայ, և այլն: Իրաւունք ունի, և իր այս յայտարարութիւնէն ետքը չեմ զարմանար իբր գիտել կուտայ թէ Պ. Գաղանձեան մոռնալու չէր նաեւ... ինքզինքը, Եւդոկիայի հայ կնոջ վրայ իր ուսումնասիրութիւնը: Բան մը ըսել ուղեղը համար ծայրայեղութեան մը երթալէն ետքը ասկէ աւելին չէր կրնար ըլլալ:

«Պ. Գաղանձեանի տեսութիւնը պակասուոր է, որովհետեւ ինքզինքը չէ գտած, ինքզինքը չէ յիշած...»: Տէր. Աստուած, դեռ ինչէր պիտի կարգանք:

«Շահնուրի բարեկամը» կամ Բարգէն վարդապետ լրջօրէն կը գրէ թէ Յովհ. Գաղանձեանի յօդուածը պէտք չէր որ կրէր «Թըրքահայ Գրականութիւնը 1903ին» խորագիրը որովհետեւ... Բազմավեպի և Հանգես ամսօրեայի վրայ չէ խօսուած հոն: Առաջին

անգամն է որ կը լսենք թէ Վենետիկի ու Վիեննայի բանասիրական ամսաթերթերը մաս կը կազմեն եղեր Ռաքահայ գրականութեան ու լրագրութեան :

«Շահնուրի բարեկամը» քողարկուած սըրտմտութիւն մը դուրս կուտայ, որ Ձիֆթէ—Սարաֆ արժանաւորապէս գնահատուեր է Յովհ. Գաղանճեանի Գրական Տեսութեանը մէջ և համակրական անկեղծ յիշատակութիւն մըն ալ ստացեր է Լեւոն Բիրիշճեան : Ապահովապէս, որեւէ մասնաւոր նկատում կամ հալիւ չունի Բարգէն վարդապետ այս երկու երիտասարդ գրագէտներուն հետ, որոնք թերեւս ո՛չ իսկ կը հետաքրքրուին Իզմիրի առաջնորդական ընտրութեան հարցովը : Բայց իր այս դիտողութիւնը առիթ կուտայ իրեն քծնելու ծանօթ հրապարակագրի մը որդւոյն առջեւ որ զինքը յիշելու պատիւը ըրած էր իր «Գրական Տարի»ին մէջ, ինչպէս նաև Իզմիրեան շաքաթաթերթին այս կամ այն աշխատակցին առջև :

Իրաւունք ունին անոնք որ կը պնդեն թէ այս դարը հաշիւի դար է. և թէ, կարգ մը մարդոց համար, նոյն իսկ գրականութիւնը ու հրապարակագրութիւնը հաշիւի դործ են :

Ինչ որ ալ ըլլան սակայն Բարգէն վարդապետի կամ «Շահնուրի բարեկամ»ին հաշիւները՝ ներկայ պարագային, իր յօդուածին մէջ նշանակուած «Կարեւոր պակասներ»ը կը դառնան սա անուններուն ու երեւումներուն շուրջը. —

Մ. Ն. Բնագէտի գիտական և նկարագրական գրուածքները. Նաւարեանի քրոնիկները ֆրանսական գրականութեան և մասնաւոր թատերական ճիւղին վրայ. «Հայ մեկնիչներ»ու ուսումնասիրութիւնը (ա՛ս ալ, կարծեմ, նոյն ինքն իրմէն՝ Բարգէն վարդապետէն) և Պարոյր Բ. Քէչեանի մուտքը իր հօր թերթին մէջ :

Այս գրողներուն ու անոնց գրչին արտադրութեանց արժանիքը ձանձնալով հանդերձ, պէտք է խոստովանիլ թէ Յովհ. Գաղանճեան պարտականութիւն չէր ստանձնած

1903ի բոլոր յօդուածագիրները յիշելու և անուններու ու նիւթերու ընդհանուր ցանկ մը պատրաստելու. իր «յանցանքը» հոն է որ քիչ մը շա՛տ ներողամիտ դանուած էր, յիշելով թերթեր ու գրողներ որոնք՝ համահման պարագայի մը մէջ՝ Մասիսին ու անոր աշխատակիցներուն գոյութիւնն իսկ անդիտանալ պիտի ձեւացնէին : Օրինակի համար, չի տեսնո՞ք Գրական Տեսութիւն մը (Բարգէն վարդապետի հա՛նած տեսակէն) ուր 1903 տարեշրջանի 52 պրակ Մասիսներուն մէջ յիշատակութեան արժանի դատուած էր միակ յօդուած մը, — Պ. Երուանդ Մեսիսեանի թարգմանախառն մէկ գրուածքը՝ բանաստեղծութեան վրայ : Մինչդեռ, Յովհ. Գաղանճեան՝ ամիսի, խոճամիտ ու անկողմնակալ ուսումնասիրութիւն մը գրի առած էր, իւրաքանչիւր օրաթերթի ու շաքաթաթերթի նուիրելով իր արդար բաժինը :

Պոլսական շաքաթաթերթ մըն ալ անցեալները երկար բարակ բաներ մը դրեց գանգատելով այդ տեսութեանէն, վասն զի... ինքն ալ յիշուած ու պղտիկ գովեստ մը ստացած էր :

Այս լրագրական երեւոյթներուն հանդէպ, անգամ մըն ալ կը հաստատուիմ սա համոզմանս մէջ, թէ գովեստը ու գնահատումը որքան աւելի շուայլեն մեր գրողներն իրարու նկատմամբ՝ այնքան աւելի դժգոհութիւն կը պատճառեն ենթականերուն որոնք աւելին պիտի պահանջէին և այնքան աւելի «Կարեւոր պակասներ» մատնանշելու առիթ կ'ընծայեն :

Յաջորդ տարի եթէ դարձեալ գրական տեսութիւն մը գրել ուղէ Յովհ. Գաղանճեան, կրնայ օգտուիլ այս փորձառութենէն. հնար եղածին չափ միակողմանի ըլլալով, յիշելով ու դրուատելով աշխատակիցները ա՛յն թերթին միայն որուն մէջ կը գրէ. այս կերպով, թերեւս նուազ դժգոհութիւն պատճառէ «Շահնուրի բարեկամ»ին և անոր պէս մտածողներուն :

ՄԵՆԱՍԷԻՐ

ԽՈՐԴԵՆԻԻՆ(*) ՄԱՀԸ

(ՔՄԱՅՔ)

Լեռներէն յերուած չէր անիկա, վայրի ու տարածուն բուսականներու այն յայտնի ժամադրավայրէն ուր գիրկ գրկի եւ թուշ թուշի կը ծաղկեւորին անոնք գրեթէ միշտ մարդկային աչքերէ հեռու, վայրի ու անօգուտ կաղաչաններու ալ մօտը չորնալով, չորնալով...

Հեռաւոր անցեալի մը մէջ թերեւս, ովքեր՝ գիտեն, լերանց կողերէն բրցուած, ա՛լ յաւիտեանապէս անջատ վար բերուած էր ինքը տուններու բուրաստաններու մէջը ապրելու համար, շարունակ ամառին ու ձմեռին ալ մէջը անթառամ:

Եւ չեմ յիշեր սակայն խորդենիիս իսկական ծագումը, ու մոռացումը ունիմ հիմակ սիրող բարեկամներէս այն մէկին, որը հարկաւորապէս կուրծքին վրայէն հէնց բրցնելով ուրիշ խորդենիի մը թեթեւ փետուրի չափ անդօր ճիւղիկ մը միսած տեղաւորած էր պարարտ հողով լեցուն պղտիկ թաղարի մը մէջ իմ տունիս համար, ինծի՛ դոր ծաղիկներու սիրահար դարձուց բնութիւնը:

Ու անկէ ի վեր ա՛լ իմա էր անի, իմ սէրս, իմ տարիանքս, որոնք այնքան յաճախ խուսափեցան ինձմէ, հիմակ դեռ չհարբեցած:

Պղտիկ ճիւղը գարունէ մը ու ամառէ մը վերջը մեծցած չքեղցած գտայ կսկոր տերեւներով, կանաչ փափուկ չուխայի կտորներ, որոնց մսկոտ ու նրբահեր կրեաններուն իմ ձեռքերովս չափտի ուղէի մօտենալ, այն փայլը, այն պայծառութիւնը չկորսնցնելու համար:

Վերջէն կարմիր կապոյտ ծաղիկները ա՛լ նոր չողք մը, նոր հրայք մը բերին մէջանդ, իր աչքերուն ու կուրծքին հուրքէն կատաղեցնող աղջիկներուն նման: Ու բոլոր միւսներուն անմաման, մեղմ ու հեղիկ այդ ընդհանուր բուրուփնաւտութիւնը անուշ ու քաղցր ապաւորութիւններու կ'առաջնորդէին

իս, մինակը, գիշերներու լռութեանը մէջ դէպի քաղցր հրշտակային էակները, Լիւբանանի կապուտադեղ ու պայծառ երկինքին ներքեւ, ուր քըրին (Oliban) հետ կը խնկէ բնութիւնը այնքան առատ ու յորդ:

Ալ սենեակիս պատէն կախած էի, տունը, երբ ամառին չողքը ու աշունին դաղջ արեւը վայելեց անիկա ու ձմեռին ցուրտը վրայ հասաւ:

Կը գուրգուրայի, ինչպէս մայր մը իր պղտիկներուն վրայ: Իրիկունները երբ աւելի ցուրտ կ'ըլլար ու գիշերը փոթորկոտ, պատուհանիս առջեւէն կը հեռացնէի ան, չմտնու համար ցուրտէն, որ սակայն փափուկ խորդենիիս խնայելու չափ զգայուն չափաք էր եղած ըլլալ: Որովհետեւ քիչ եղած չափտի ըլլան ձմեռուան բուքերը ու ոչ ալ ցուրտը երբեք կրցաւ ամոքել այն սիրտերը որոնք սառեցուց ինքը: Օ՛հ, սակայն սէրին մէջ ինչպէս կ'ամօքուին վշտահար ու սառած սիրտերը որ կը յուզէ, որ անդգայ կը դարձնէ ու կը մահացնէ ալ շատ անգամ:

Առտու մը սառած գտայ խորդենիս:

Յուրտը այնքա՛ն բարկ ու անարկու եղած էր որ գիշերին մէջտեղը խամրեցուցած էր հէգ ծաղիկը:

Ու ջերմոցիս բոցին ներքեւ երբ զգայութեան վերջին նշոյլները կը վնասէի հոն՝ տերեւներուն ու ցողունին ալ վրան, զգացի սառ շունչը անոր որ կաթիլ մը ջուրի վերածուած կ'իջնէր վար թաղարին մէջը, ուր կէ երկար ատեն առած էր իր անունդը, իր ուժը ու բուխնդակ գեղեցկութիւնը խորդենին:

Ալ թաղարը դարտակ ու պարապ կ'ըսպասէ անդին, մէկ անկիւնը տունին, ու ո՛չ մէկ ծաղիկ պիտի տեղաւորուի հոն, ու ոչ մէկ կենդանութեան նշոյլ պիտի ծաղկեւորի հոն, մինչև որ գարունը վրայ հասնի, ու թաղարին մէջ՝ որ ալ նուիրական դարձաւ հին հողը ապրեցնէ ծածուկ մնացած հին սերմը խորդենիիս չոր շատ սիրեցի ես:

ԽՈՐԴԵՆԻՆ

(*) Geranium, տեսակ մը ծաղիկ, սարսաղիա կամ ըթըր կոչուած:

ՄԵՂՔԻՆ ՊԱՏԻԺԸ

(ՆՈՐԱՎԷՊ)



Հալքի գացած էի ան տարին, դպրոցական չըջանա դեռ նոր աւարտած, գրասեղաններուն վրայ կըքած մարմինս կաղզուրեւու, յոգնած ու բեռնաւորուած միտքս հանդարտեցնելու համար: Հոն էր որ հանդիպեցայ անոնց, հայր ու աղջկան մը, որոնց կեանքին պատմութիւնը անքան մորմոքիչ օրեր անցընել սուաւ ինծի և որոնց յիշատակը միշտ սարսուռով կը տօնեմ:

Ամէն առտու կարծես ժամադրութիւն ըրածի պէս միշտ նոյն տեղը, չամբուռն տակ, կը հանդիպէինք իրարու: Եօթնասունի մօտ ալեւոր այդ ծերունին էր որ գրեթէ գրկած կ'առաջնորդէր իր մանկամարդ աղջկը, որուն հալած ու մաշած իրանին վրայ գլուխը և մանաւանդ աչքերը այնքան զօրաւոր կերպով յախտակեցին զիս՝ որ օրերով անխօս ու անմրմունջ կը նայէի իրեն, ու կը կարծէի շատ բան կարդալ անոնց մէջ. կեանքը՝ իր բոլոր էութենէն խոյս տուած՝ աչքերուն մէջ միայն կեդրոնացած էր կարծես. ամբողջ քերթուած մը այդ աչքերը, երկինքին ու ծովուն կապոյտին պէս ջինջ ու անոնց չափ անհուն ու խորհրդաւոր:

Հօրը դուրգուրանքը՝ աղջկանը վրայ ունեցած անսքող սէրն ու գորովը կը մատնէր կարծես, թէ՛ իր արիւնով շաղուընուած այդ էակին ֆիզիքական ցաւը, անբուժելի հիւանդութեան մը անդուծ քմահաճոյքին խաղալիկ եղող այդ քնքոյշ հոգիին ցաւը՝ արդիւնք էր աւելի զօրաւոր, աւելի կսկծեցունչիչ ցաւի մը. բարոյական սազնապի մը ապահովապէս:

Քիչ անցած, այնպէս մտերմացայ այդ ղոյգին իբր թէ տարիներով մէկտեղ ապրած ըլլայինք. ա՛լ անկից վերջ պէտք մը դարձած էր ինծի անոնց՝ մէկտեղ որիլը: Օր մը, հօրը բացակայութենէն օգտուելով, հէք բարեկամուհիս պատմեց ինծի թէ ինչպէս կորսնցուցած էր իր մէկ հատիկ սիրականը, ման-

կութենէն իրեն սահմանուած նշանածը, երիտասարդ մը՝ որուն մեկնումը աս աշխարհէն լախար հարուածի մը պէս իջած էր գլխուն. իր հրեշտակի անբիծ ու անարատ հոգին չէր կրցած տոկալ ահեղի զրկանքին, ու ահա՛ հիմակ անխառն գոհունակութիւնով էր որ կըզգար իր կեանքին հիւլէ առ հիւլէ քակուել փրթիլը իր մարմնէն, ամէն օր քիչ մը աւելի գոհ ու երջանիկ, որովհետեւ ամէն օր կըզգար թէ քայլ մը աւելի կը մօտենար այն փոսին ուր կըսպասէր իր սիրելին, անոր հետ մէկտեղ փտտելու վայելքէն վերացած՝ կը ժպտէր միշտ:

Իրաւ ալ, երկու ամիսէն իր ճեպ ճերմակ երազներովը, ճերմակներու մէջ փաթթուած, տարին հոգին ու նշանածին յանձնեցին զինքը:

Հայրը իր բժշկական բոլոր ճիգը պարապ տեղը չուայլած էր՝ աղջկան կեանքը փրկելու համար. անոր տեղը սև շիրիմն էր, վերջնական ու անխուսափելի. ու հիմակ կ'ըսէր իր քանակին մը կոյր համակերպութեամբ գլուխը ծռած բախտին այս անհամ ու դառն կատակին տակ, կը հետեւէր իր մէկ հատիկ աղջկանը դագաղին:

Անոր մահուանէն վերջ, զիս տեղը դրաւ տարաբաղդ սգաւորը. տունին միակ մտերիմը ես եղայ, զինքը միխթաբերու նպատակաւ սկսայ աւելի յաճախ երթալ: Հեւացող կուրծքէն բխած աղէկէղ աղաղակները հոգիս կը ձմէին, ի դուր կ'ուղէի ըսել բառ մը՝ որ ճաճանչն ըլլար իր սրտին սև երկնքին: Անդրբիբիմեան յոյսերը, յաւիտեանական անծիր երջանկութիւնները կը ջանայի թուել. հոս տառապողը, հոն, երկինքը երջանիկ պիտի ըլլայ կ'ըսէի, փառքի պսակը արքայութեան դուռնէն պիտի տրուի Աստուծոյ ընտրեալներուն. Աստուած հոգեպէս տոկուններուն կը զրկէ՝ կ'ըսէի՝ անսահման վիշտերը, վերջնական փորձ մը ձեռք անցընելու համար:

—Չէ՛, ըսաւ օր մըն ալ, արքայութիւն, դժողք, ամէն բան հոսկէց կըսկսի, պէտք չկայ աչքը յաւիտեանապէս փակել, ապրուած կեանքին համեմատ վարձատրուելու համար: Ես ինքս կենդանի օրինակը ու զօրաւոր ապացոյցը համոզումներուս՝ ըսաւ, ու, մեռ-

նորդին սեպհական սենեակին մէջ, անոր շունչովը ապրող ու այրող առարկաներէն չըջապատուած, մթնշաղի մը, երկար ու տաժանելի պատմութիւնն ըրաւ իր կեանքին:

«Զաւկիս կորուստը մեծ ու վերջնական պատիժն է մեղքի մը՝ զոր գործեցի երիտասարդի թեթեւ օրերուս: Բարի՛ք բժշկական ուսանող եղած ատենս, հանդիպեցայ հարուստ, երիտասարդ ու խիստ պատուաւոր որբ աղջկան մը՝ որուն խնթի պէս սիրա հարեցայ առաջին տեսութենէս իսկ, ա՛յնքան հրապուրիչ, ա՛յնքան դիւթիչ, ա՛յնքան զգլխիչ գոտայ իր ամբողջութիւնը. բարե՛ձեւ իրանի մը վրայ սեգ գլուխ մը, ճերմակ ողորկ այտեր՝ վարդ երանգներով պճնաղարդուած, հակասութիւն մը կը կազմէին իր սեպ սեպքերուն հետ՝ որոնց համար պաշտամունքս օրէ օր աճեցաւ: Երկու տարի շարունակ գերմարդկային ճիգերով ջանացի զինքը ճանկերուս մէջ ձգել, յաղթանակը կ'ուշանար: Կինը իր մէջ չէր արթնցած տակաւին, սպասեցի զարթնումին՝ որ վերջապէս լոյս տեսաւ: Մտերմական իր առաջին քայլէն ետք, յուսալից ու երջանիկ, շարունակեցի ճամբաս, մինչև վախճանը բուն նպատակիս: Ամէն օր քիչ մը աւելի զօրացաւ իր սէրը ինծի հանդէպ, ու օր մըն ալ, սիրովը արբւշիւ ու կուրացած, ընդունեց մէկտեղ, մէկ տանիքի տակ ապրելու առաջարկս: Տարիներով իմ եղաւ. ան, իմ ինչքս, իմ կինս, իմ դերիս. բայց որքան ան ինծի մօտեցաւ, այնքան ես իրմէ հեռացայ, յաղթանակը տարած, ա՛լ աչքերս չի տեսան այն քնքոյչ աղջկան նախկին հրապոյրը. ես որ երբեմն իր մէկ ժպտին մէկ համբոյրին կեանքս վտանգելու պատրաստ էի, ա՛լ խոյս տալ սկսայ իրմէ: Երազիս, փափաքիս շօշափելի իրականութիւնը կորսնցուց իր անաղարտ գոյնը, իր դիւթական ձեւը. իտէ՛ալը մեռաւ մէջս՝ իր գոհացումը առած բոլորէն իսկ: Հետք հետէ աւելի հեռացայ իրմէ, անբացատրելի սահմանով մը: Արցունքոտ աչքերով, բզլիտիչ չեշտերով խնդրեց ինձմէ օրինաւոր կինս ըլլալ: Անոր՝ որ ամէն բան տուաւ ինծի, պատիւ, երտասարդութիւն, զրամ, սէր,

սիրտ, ես չի տուի չոր անունս: Կրնայի հաճոյքի ժամեր որոնել ուրիշ բաղուններու մէջ, կրնայի հազար անգամ նոյն սիրերդը մոլտացող չրթունքներու վրայ զովացնել տարփոտ այրող բերանս, աւա՛ղ...:

«Բնութենէն ամուլ մնալու դատապարտուած ըլլալը երեսին զարնելով՝ ըսի իրեն թէ հայր ըլլալ կ'ուզէի ամէն բանէ առաջ: Անեղեակայելի միջոցներ առաջարկեց, ամէն բան ընդունելու պատրաստականութիւն ցուցուց, գէթ ընկերութեան առջև օրինաւոր կինս ըլլալու համար: Մարդը մեռած էր մէջս ու աննուած մնացի:

«Եօթը տարի իրեն հետ կենակցելէս վերջ, օր մըն ալ փախայ տունէն ու երկրէն, լքելով զինքը անխղճօրէն, արհամարհելով իր զոհած սիրտը, ոտքերուս տակ ձմելով իր գուրգուրալից սէրը: Անէ՛ծքը գլխուն վրայ, խղճմտանքի բեռը սրտիս մէջ թաղած, եկայ Պոլիս. ո՛չ ոք զիտցաւ անցեալս, ու ամէնէն պատուաւոր ընտանիքներէն առաջարկութիւններ տեղացին, որոնցմէ մէկն ընտրեցի օր մը ու ես ինքս մոռնալով անցուցած օրերուս յիշատակը՝ նոր եռանդով, նոր աւելանով կազմեցի տունս, որ, աւա՛ղ, հիմնաքարը եղաւ ներքին անխօս տառապանքի մը և որ մահուամբս իսկ պիտի չանհետի:

«Ընտանեկան միութեանս մէջ եղայ այնչափ դժբախտ՝ որչափ պէտք էր ըլլար ինծի պէս վատ մը: Կինս առաջին ու միակ դաւկիս ծնունդ տալէն առաջ իսկ զգուանքով վերաբերուեցաւ ինծի. չեմ յիշեր օր մը բերնէն լսած ըլլալ սիրոյ բառ մը, գգուանքի սիւք մը չեկաւ ճակատս շոյել. ինչ որ ըրի ես տարփուհիս, զինքը վայելելու լիազօր իշխանութիւնը ունեցած օրէս, նոյն բանն ըրաւ ինծի իմ օրինաւոր կինս:

«Եւ որպէս զի ցաւս խորարմատուի, խղճի խայթ մարմին առնէ, ճիշդ եօթը տարի վերջ, կինս փախաւ տունէն, ձգելով զիս զբրեթէ այրի, ու զաւակս գրեթէ որբ: Իմ սէրս չէր գոհացուցած զինքը, ինչպէս զիս չէր գոհացուցած միւսին սէրը:

«Այն օրէն ի վեր քսան տարի անցաւ, քսան տառապանքի, լացի սև խոշոր տարի-

ներ, ու վայրկեան մը չի դադրեցայ մտածելէ թէ անմեղ կնոջ մը կեանքին հանդէպ գործած անասման ու անծիր յանցանքիս պատիժն էր այս. մինչև էն խորունկ խռոչները էութեանս զգացի ու հաւատացի թէ երկնքէն սահմանուեցաւ այս լքումը: Տարիներ վերջ, դաւակա կը կորսնցնեմ, ահա՛. միշտ նոյն յանցանքին արդիւնքը. չէ՞ մի որ հայր ըլլալ ուղեւս պատրուակելով հեռացայ հրեշտակի հոգիով այն սուրբ աղջիկէն:

«Ու կեանքս պիտի երկարի, գիտեմ, որ պէս զի երկարի նաև անոր՝ ուրուականին հալածումը: Պիտի ուղէի տեսնել զինքը՝ լքուածը, պիտի ուղէի ոտքերուն իյնալ՝ ճերմակ մաղերովս, ու լեզի լացս լալ, զըզման լացս, իր ներուժը մոռալ, գէթ գերեզմանիս մէջ հանդարտ պառկելու համար:

ԱՐԱՅՈՒՄ

ԱՂԶԿԱՆ ՄԵ ՕՐԱԳԻՐԵՆ ՔԱՂՈՒԱԾ

ՅԵԿՈՇԱՔՔԻ

Ու ան կը շարունակէր դեռ պատմել.

«Ծովը այնքան հանդարտ միապաղաղ էր որ՝ հաճոյք կը դադարէ նաւուն կամրակէն պզտիկ ձուկերուն ուտելիք նետելով, ու անոնք կը վազէին, կը սուրային նաւուն հետ, ջուրերուն մէջէն, անխնայուն շինած փըրփուրէն կորսուելով, անհետանալով երբեմն: Քիչ մը ետքը ցամաքը տեսայ հեռուէն, դժբախտային պայծառութեամբ շքեղ քաղաք մը, որ հորիզոնին մաքուր կապոյտը կ'արատաւորէր, տարտամ, աննշմարելի գիծերով: Նաւը կ'առաջանար դէպի այդ քաղաքը, երբ արթնցայ երազէս, սպասուած անուշ հաճոյքէ մը զրկելով ինքզինքս:

«Ամէնէն գէշ բանն է ասիկա: Աղուոր առարկայի մը տիրանալ, համբուրելի էակի մը քովը, ըզձալի նպատակի մը հասած ըլլալ կը կարծես, ու վարկեանէ մը յանկարծ կը հիասթափիս և անոնց կեղծ, սուտ բաներ ըլլալը կըզգաս դառնութեամբ: Ասիկա այն խաղն է զոր երազը կը խաղայ ցաւատանչ հոգիներուն:

«Կատաղօրէն պօռալ ուղեցի: Ինչո՞ւ չհարունակուէր այդ երազը. ինչո՞ւ բաղձացած հանգրուանիս չհասնէի:

«Դա՛րձեալ քնացայ:

«Այս անգամ մեր տունին մէջն էի, երկրորդ յարկին աջակողմեան սենեակը: Անկիւնը, բազմոցին վրայ աղջիկ մը կը քնանար, թարմ, ծաղկափի էակ մը: Ձորս բոլորը ծաղիկներ սփռուած էին, հոս, հոն, վրան, գլխուն շուրջը, ոտքերուն մէջերը, շրջապահստին ամէն կողմը, ձեռքերուն մէջ: Ապշած մնացի: Դէմքը այնքան յստակ, աչքառու կերպով կը բացատրէր իր անձին, իր էութեան ամբողջ հրաշալիութիւնը:

«Անանկ մէկը չէի ճանչնար ես:

«Ձիւնաթոյր մորթ մը, հիանալի գիծերով դէմք մը ունէր:

«Պահ մը ետքը ելաւ իր պառկած տեղէն և քայլել սկսաւ:

«Դրանը բացուածքէն անոր կը նայէի եռանդոտ սղու մը մոլեգնութեամբը: Վարդենիի մը պէս, որ հովէն իր թեթև, փափուկ թերթերը կը թափթփէ, երազին անըրջային աղջիկը, խորհուրդի ծաղիկը, մարմինին վրայ ունեցած բոլոր ծաղիկները՝ յասմիկները, սմբուկները, շահպարկները, հիբիկները, վարդերը, մանիշակները վար թափեց և սկսաւ, անհոգօրէն, զգլխիչ ինքնատուութեամբ մը անոնց վրայէն անցնիլ, կոխկըրաւելով, ճգմելով, անոնց բոյրը մեռցնելով իր պզտիկ ոտքերուն տակ:

«Ամբողջ հասակը, իր կարկառուն, անթերի կերտուածքովը կ'անդրիանա՛ր հոն, սենեակին մէջտեղը:

«Դուռը բացի բոլորովին, այս անգամ, որպէս զի քովը երթամ և իր մաքուր, եղեմական մարմինին քաղցրութիւնները, մոգութիւնները վայելեմ: Իտէալ, բաղձացուած էակի մը շունչովը կ'ապրէի այդ պահուն, երազներուս մէջ անոր կատարելութեան, անոր կախարդութեան սարսուռը զգալով: Նոյն իսկ կը զգուշանայի անոր մօտենալէ, որպէսզի չելլեմ փոյնեմ ձիւնէ, եթերէ, շուշանէ այդ բուրգը, որ մրեւնոյն ատեն կը խօսէր ու ինծի կը նայէր, աչքե-

րուն մէջէն սիրոյ երջանկաւէտ էլտօրատուն նշմարել տալով: Բայց ակնթարթի մը մէջ անհետացած էր ան, երազին աղջիկը: Եւ զգացի որ, սակայն, ե՛ս եմ յանցաւորը:

«Արթնցած էի:

«Խեղճս: Ամիսներով չարչարեցի երեւակայութիւնս, որպէսզի անգամ մըն ալ այցելութեան բերէ ինծի այն հրաշալի էակը, որուն համար առտունները կուլայի, զայն երազիս մէջ տեսած չըլլալուս պատճառով: Տղայ էի: Եւ իրիկունը ուրախութեամբ դարձեալ անկողին կ'երթայի, միւսը տեսնելու համար: Բայց ան չէր երեւնար, չէր գար, չէր տեսնուէր:

«Գերմարդկային ուժերէ ցնցուած, հարծեն կ'ընկճուէի հետզհետէ, հազիւ պզտիկ մխթարութիւն մը գտնելով, այն պզտիկ երգերէն, որոնք խտէալ գեղեցկութեան պատկերը կը խորհրդանշանէին:

«Այդ երգերը քովս են դեռ»:

Բարեկամս մեկնեցաւ՝ արագօրէն, միամիտ հապճեպով մը:

ՆԵՐՔԱՐՔԻ

Միտքս բաւական չարչարեցի բարեկամիս երազային պատմութիւնովը, մինչդեռ ես ալ, իմ կարգիս, միեւնոյն աղբեցութեան կենթարկուէի: Անոր առեղծուածային ընկերակցութեամբն ու տարօրինակ տղու մը քը մահաճոցքներէն ճնշուած, գիշերը՝ ե՛ս ալ կ'երազէի: Բայց երազ մը, որ, պիտի տեսնես, երբեք յարաբերութիւն չունի բարեկամիս տեսածներուն հետ:

Զբօսավայրի մը մէջ էի: Բազմութիւն մը խռնուած էր ամէն կողմ, վերը, վարը, սանդուխներուն տակը, ներքնողիներուն, նրբանցքներուն, սրահներուն, խուցերուն մէջ: Յորդառատ լոյսեր վարդագոյն ու լայն ստուերներ կը պտըտցնէին: Զայներ, կանչուողներ, տարօրինակ խօսուողք մը, որ կը խոստովանի, կեանքին մէջ առաջին անգամ կը լսէի: Դիմակաւոր և անդիմակ մարդերու անթուելի խումբ մը չըջապատած էր զիս: մէկը ձեռնոցը կը նետէր երեսիս անբաղաճ վարօրէն, ուրիշ մը անունովս կը հայոյէր, շատեր կը խնդային:

Առաջին սրահին վերի անկիւնը ծաղկեւածառի խանութ մը դարձած էր շիտակը: Զես գլխեր ինչո՞ւ համար, ի՞նչ նպատակով, այդ ծաղիկի թաղարները բերած շարած էին հոտ, որոնցմէ՝ շատեր թօշնած, վախտ ծաղիկներ կը ցուցադրէին, և շատերն ալ՝ ցողաթուրմ: Մեխակներ, գամէլիաներ, յասմիկներ, վարդեր, քրիզանթէմներ, մանիշակներ և տակաւին անհուն ղեղխութիւն մը ծաղիկներու, որոնք սենեակին օդը կը փխէին, կը բուրումնաւէտէին, խիստ եւ կծու արտաշնչութեամբ մը:

Մէկ քանի դիմակաւորներու ձեռքը պղտիկ ծրարներ տեսայ, որոնց վրայ հեռուէն իսկ ընթեռնելի, խոշոր գիրերով échantillon sans valeur բառերը կը կարդացուէին:

Կանանչ տափատ և դեղին վրանոց հազած երիտասարդ մը, հեզութեամբ, ինքզինքին մեծ բանաստեղծի հով մը տուած, անկապ, աններդաշնակ ոտանաւորներ կ'արտասանէր, գեղջկական, պոռոտ զգեստ մը հագած, մազերը ետեւը ձգած մարդուկի մը հետ, որուն համար կը պատմէին թէ կուպիտոնի աղեղովը զարնուած է եղեր, ասկէ քանի մը... դար առաջ:

Զեռնոցաւոր, երկար վերարկուով մարդ մը, քանի մը կիներու հետ յունարէն կը խօսէր, ձեռքերը շարժելով անդադար, խնդալով ու զուարճարանելով:

Զայրացածի երեւոյթ առած մարդուն մէկը կ'ըսէր որ ի՞նչպէս տարի մը առաջ իր գրած յօդուածները այսօր կը ծաղրեն: Եւ յետոյ կ'աւելցնէր որ ինքը Սարսէյին աշակերտն է, թէ քսաներկու անգամ Տակիրոս և Ագաթանգեղոս կարդացած է: Ուրիշ երկու գիրուկ տարէց մարդեր սպասուհիի տիպարը ներկայացնող մանկամարդ կնոջ մը ետեւէն կը վազէին շարունակ և անկէ ժպիտներ կը մուրային, կնանճ քաղաքաւարութեամբ մը:

Երեք—չորս հատ փողոցի աղաքներ, այս պահուս, պղտիկ, թեթեւ թուղթերու անհուն անձրեւ մը տեղացուցին բոլորին վրայ: Եւ հեռուէն մէկը պոռաց, յուսահատ.

— Խեղճ էք, ինչ էք. ինչո՞ւ կեցել էք

հոս, չպարէ՞ք: Ձեզ ինչո՞ւ համար հրաւիրած են: Ճաշելու, խնդալու, զուարճանալու համար միայն: Օ՛հ, դարձէ՛ք...

Բայց հանդիսականները ձանձրանալու երեւոյթ մը առած էին: Եւ շուրջս կը նայէի, սակայն, նոր նոր դէմքեր կ'ընդնշմարէի, նորօրինակ խօսակցութիւններ կը լսէի:

Բայց վերջապէս, ինչո՞ւ սոռտ խօսիմ, կը զուարճանայի, կը խնդայի...

Երկար ուրտէնկոթով, ակնոցաւոր մարդ մը, յնցուղը ձեռքը՝ սենեակին անհամար ծաղիկները ուղղելու կ'երթար ապահովաբար, սրահին վերի անկիւնը:

Կապոյտ, երկար զգեստով ծածկուած աղջիկ մը, կուլար բարձրաձայն, ապուշ մարդուն մէկը իրեն նայած, իրեն հետ խօսած ըլլալուն համար:

Զարմանալի՛ բան:

Կին մը կար. բեհեղէ ու ժանեակէ տօմինօ մը հագած, որ իր քղանցքները հոս հոն կը տատանէր, վազելով, վազվառելով, ու ձեռքին խարաղանը դէմը գտնուող և իրմէն անբաժան երկայնահասակ, դիմակաւոր մարդուն գլխուն կը շահեցնէր:

Աղջիկ մը կար, որ կը խնդար բարձրաձայն, կը պուար, կը գուար տղու մը պէս: Սիրուն, բարեձև տղայ մը, ինչպէս յայտնի կ'երեւար իր շարժուձևերէն, կնոջ մը թեւը մտած, ներս դուրս կ'երթար, կ'ելլէր և առատօրէն չաքար կը բաժնէր, ուրիշ անակնկալներ պարունակող ազտիկ սիրուն տուփերու հետ:

Այդ մարդոց մէջ շատեր, անոնք մանաւանդ որոնք պարտհանդէսին մէջ, — պարահանդէս մըն էր հոն ապահովաբար, — նոր, աղուոր բան մը ըրած ըլլալ կարծած էին, *échantillon sans valeur* այդ տուփերը անկիւնէ անկիւն փոխադրելով պառտցնելով, բան մը որ ամէնուն ալ զուարճութիւն կը պատճառէր:

Երկարահասակ, չիք տղայ մը կատուներով կըլքաղէր, անհիւն մը, մինչդեռ դիմացը, քանի մը քայլ հեռուն, ուրիշ մէկ քանի հողիներ իրարու հետ վէճի բռնուած էին:

Երբեք միտքէս չպիտի ելլէ, այս միամիտ և տղայական կատակերգութիւնը:

Ըլլալի՞ք բաներ են, պիտի հարցնես, սիրելի Զարուհի:

Բայց ինչո՞ւ չէ: — Ձէ՛ մի որ երազ էր: Զորեաբարի

Ա՛խ, սա կեանքը...

Ինչպէ՛ս, դո՞հ ես ապրելէդ: Ձեմ գիտեր. երբ՝ քով քովի գանք, կ'ուզենք յաւտեանապէս ապրիլ ու վայելել գիրար. գիտես, որ հողիէս աւելի՛ կը սիրեմ գրեզ: Երբ մարդ մտածէ թէ ա՛յս է կեանքը, զգալու և խորհելու սա տաժանագին, անդիմադրելի փորձութիւնները, հաւատա՛, ապրիլ չպիտի ուղէ բնաւ: Ինչո՞ւ ապրի ան՝ որ երջանիկ ըլլալու յոյսը այսօրուէն իր ներսը չունի: Բա՛ղդը: Օ՛հ, ո՛չ ոք կը խաբուի այդ վնակէն:

Բարեկենդանի օրով ասանկ մտածումներ ալ կ'ունենայ Սիրանոյշդ, ի՛նչ պիտի խորհիս հիմա արդեօք:

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍՅԱՆ

Ծաղիկ շաբաթաթերթի արտօնատէր Անտօն էֆ. Սադայեանի զոքանչ՝ Տիկին Շաղիկ Ալթունեանի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ երեքշաբթի օրը, Բերայի Ս. Յովհան Ոսկերեան եկեղեցին, նախագահութեամբ Սվադի և Թօքատի Հայ Հոռմէակահայ առաջնորդ Հաճեան Գերապայծառի: Խմբագրութիւնս իր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցելոյն ընտանեաց և մասնաւորապէս իր պաշտօնակցին՝ Սադայեան էֆ.ի:

Հինգշաբթի օրը, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ, հանդիսաւորապէս տեղի ունեցաւ՝ այրի Տիկին Նունիկ Խ. Թօփահանէլեանի (ծնեալ Սիմոնովի) յուղարկաւորութիւնը, նախագահութեամբ Տ. Հմայեակ Սրբազանի որուն շուրջը կը գտնուէին երկու վարդապետներ և բազմաթիւ քահանաներ: Դադաղը ծածկուած էր ծաղկեայ խաչով մը պսակներով զորս նուիրած էին հանգուցելոյն դուստրը և ազգականներ: Թաղումը կատարուեցաւ Շիշլիի ազգ. դերեղմանատունը. Թօփահանէլեանց դամբարանին մէջ: Այս տխուր առթիւ մեր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցելոյն զաւկներուն, քոյրերուն և Թօփահանէլեան ու Սիմոնովի ընտանեաց բոլոր անդամներուն:

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻ^(*)

ՀՐԱԺԵՇՏ ՀԻՆ ՏԱՐԻՈՅՆ

Ա. ՊԱՏՆԵՐ

Կորաքամակ ու ոգեսպառ Հին-Տարին՝ ցրց
ցոցի հագած, մառուած ու պատանասուն
ցուպը ձեռքին յառաջ կուգայ եւ նուազ ձայ
նով՝ իր հրաժեշտը կուտայ:

Հնչեց ժամըն իմ կենաց,
Հրաժեշտ կուտամ աշխարհին.
Յուպը ձեռքին ծերացած
Կը մեկնի արդ հին-տարին:

Անցելոյն ծոցն անպարփակ,
Կուրծքը ճեղքած՝ կ'ըստասէ.
Զիս ընկզմել խոր յատակ,
— Ծե'րուկ, քալէ՛, ինձ կ'ըսէ:

Եւ ես կ'երթամ, ո՛հ, անդարձ,
Հրաժեշտ կուտամ աշխարհին,
Յուպը ձեռքին ծերացած
Կը մեկնի արդ հին-տարին:

Մընաք բարով, սի'րելիք,
Բնութեան օրէնքն անփոփոխ,
Մէկը միւսին տայ տեղիք,
Զիւնը՝ գարնան ոտնակօխ:

(*) Ծ. Խ. — Կարնոյ Սանասարեան վար-
ժարանին մէջ Կաղանդին գիշերը կատարուած
գալորոցական հանդէսին գլխաւոր հրապօրը
կը կազմէին աշակերտներուն կողմէ արտա-
սանուած ոտանաւորները որոնցմէ է'ն սի-
րունն ու պատկերալիցը Հին եւ նոր Տարի, —
հեղինակութիւն՝ ողբացեալ ուսուցիչ Կորիւն
Մկրտչեանի, — խմբադրութեանս ղրկուած
ըլլալով՝ հաճութեամբ կը հրատարակենք
դայն, յարգաւք մը ընծայելու համար սա-
ղանդաւոր ու վաղամեռ Կորիւն Մկրտչեանի
յիշատակին եւ իբրեւ համակրանքի արտա-
յայտութիւն մը՝ Սանասարեան սաներուն նը-
կատմամբ:

Եւ ես կ'երթամ, դուք կացէք,
Ժրպիտ թողած ձեզ բաժին,
Սիրով զուարթ ապրեցէք,
Վերջին կըտակա ամէնին:—

ՆԱԻԱՍՍԱՐԴԻ ՅԻՇԱՏԱԿ

Բ. ՊԱՏՆԵՐ

Երիտասարդ մը՝ ժիր ու կայտառ, կը մեծա-
խօսէ:—

— «Ո՞վ ինձ կուտար նաւասարդին՝ առաւօտ,
Այն ծըխանի ծուխն ոլորուն, երկնամբարձ.
Ծաղկեայ սարի պէս պէս ծաղկունք, անուշ օդ,
Աղօթարանք, սիրած վայրեր մեր Սուրբ Հարց:

Ո՞վ ինձ կուտար այն վազելուն եղջերուաց,
Ինձ կը բերէր եղանց վաղքը գեղեցիկ,
Որոնց եւ հետ գեղջարարոյ մեր նախնեայ
Պարն ու երգը, ձայնը թռչնոց երգեցիկ:

Եւ արեւու փայլը չողչող ու սիրուն
Լերանց ծերուկ ճակտին զարկած փառունակ,
Եւ ծաղկալից ձորեր շրջել, հովասուն
Ամանորի սիրուն աւուրց յիշատակ:»

Գ. ՊԱՏՆԵՐ

ՄԱՆՈՒԿ ԵՒ ՆՈՐ-ՏԱՐԻՆ

Մինչ հին-տարին կը մեկնի ծանրաբայլ՝
Նորը՝ դուռը կեցած՝ կը ծեծէ ձեռքին բռ-
նած նարինջ, խնձոր ու սաճն. եւ գեղաժը-
պիս. —

ՄԱՆՈՒԿ

«—Ո՞վ է. ո՞վ է դուռ կը ծեծէ
Ճամբորդ ունինք, պէտք է երթայ,
Ո՞վ է այնպէս դրան կը հեծէ,
Կա'ց, հին-տարին հրաժեշտ կուտայ:

Ժամանակի կառքը թեթեւ
Մեզ կըստասէ միշտ անհամբեր
Արեւ մըտաւ սարի ետեւ,
Մենք հին-տարին դեռ չենք ճամբեր.
Ո՞վ է այնպէս դուռ կը ծեծէ:» —

ՆՈՐ-ՏԱՐԻՆ

«—Գեղաժըպիտ՝ իր թեւերուն
Բարձած՝ նարինջ, խնձոր ու տանձ,
Նոր-տարին է, մանուկ սիրուն,
Վաղէ՛, չո՛ւտ եկ, դուռը դու բաց:
Դանդի ուսման փակուած դռներ
Ժամանակը բացաւ առջիս,
—Դընա՛, ասաց, կենաց բեռներ
Թեթեւացո՛ւր ծայրով խաչիս:
Մանուկներու սիրտը զըւարթ,
Լից անպատուժ ուրախութեամբ,
Աղջիկներու կրճքերուն վարդ
Նոցա սրտէն ցրուէ՛ մութ ամպ:
Եւ ծերերուն կորաքամակ
Ուտ տուր, ժըպիտ քեզ արձակել,
Երիտասարդ սրտից համակ
Դընա՛ լուսոյ արեւ ծագել:
Եւ աշխարհին բերկրապատար
Շնորհէ՛ կենաց նորոգ չրջան,
Վառէ՛ սիրոյ բոցն անդադար
Տգիտութեան ղի՛ր դու վախճան:
Եւ հապըչտապ կուգամ ահա,
Վաղէ՛, վաղէ՛, դուռը դու բաց՝» —

ՄԱՆՈՒԿ

«—Ո՛հ, կը վախնամ, թէ զիս խաբես.
Մեր դուռը քեզ եւ չեմ բանալ,
Գեղաժըպիտ Նոր-տարին չես,
Խօսքերուդ՝ ես չեմ հաւատալ:
Հին տարին ալ այդպէս ասաց,
Այլ մոռացաւ չա՛տ բարիքներ»:

ՆՈՐ-ՏԱՐԻՆ

«—Չէ՛, չեմ խաբել, ինձ հաւատա՛,
Ամանորիս՝ բաց քո դռներ.
Անսուտ խօսքիս՝ երկինք վըկայ,
Դեզ բերել եմ քաղցըր նըռներ:
Բաց ինձ, եթէ անցեալ տարին
Մանուկ սրտիդ բերեց մութ օր,
Թէ ծաղիկներ դարնանային
Ձո ծաղկեցան քեզ փառաւոր,
Թէ աշունը, ամառ, ձմեռ,
Չողջունեցին քեզ խանդավառ,
Թէ մայիսեան վարդը թառմեր,
Դեզ չըժպտաց արեւ պայծառ,
Ո՛հ ես նոցա փոխան՝ անգին
Դեզ կը բերեմ ծաղիկ դարուն,

Եւ կարմրագոյն վարդ մայիսին
Կը թափեմ քո կրճքին սիրուն:
Եւ ամառուան յուսի՛ր դաշտեր
Եւ աշնային դեզ պերճութիւն,
Պայծառ արեւ, կապոյտ եթեր
Դեզ կը ցոլան սիրով անհուն...»:

ՄԱՆՈՒԿ

«—Հաւատք չունիմ. ես կը վախնամ.
Ժըպիտներուդ ներքեւ գոցէ
Ծածկած լինիս մաղձ դառնահամ,
Դարձի՛ր դու յետ, դուռը գոց է»:

ՆՈՐ-ՏԱՐԻՆ

«Բաց ինձ, բաց ինձ, լուսին պայծառ
Դեզ լուսալիր պիտի շողայ,
Պիտի ծաղիկ քո կենաց ծառ,
Սիրտըդ ինձմով թո՛ղ գոհանայ:
Եւ քո ծնողաց ծիծաղադէմ
Ես բերել եմ սէր ու գորով,
Վշտաց հետքեր կը փարատեմ,
Կենաց վայելք բաշխեմ սիրով:
Եւ մանկացած Աստուածորդւոյն
Փառքով լըցած համայն աշխարհ,
Մեղաց որդւոց ես փրկութիւն
Պիտի բերեմ յերկիր խոնարհ:
Օր պիտի գայ, եւ մօտ է այն
Կենաց ձրմեռն անհետ իսպառ.
Կանաչագեղ օրեր դարնան,
Պիտի ժպտան քեզ ծաղկավառ:
Բաց ինձ, բաց ինձ դուռը փակած»:

ՄԱՆՈՒԿ

«—Տե՛ս, Հին-տարին մութ վարագոյր
Անուսներուն գլխին քաշեց.
Սրտով, մտքով տղայոց կոյր,
Հոգւոյ խաւար սիրտը մաշեց»:

ՆՈՐ-ՏԱՐԻՆ

Օրհնեալ խաչի ոտքի ներքեւ
Բոլոր իղձըդ դընա՛ դու ղի՛ր
Ամանորի ծագած արեւ
Այդպէս շուտով չի անհետիր:
Ձրգէ՛ ձեռքդ բազկատարած.
Խաչի ներքեւ դու աղօթէ.
—Լոյսըդ վերէն թափէ՛ Աստուած.
Մարդկային սիրտ շատ աղօտ է:—

Եւ կընթանայ ամենայն ինչ,
Վերջին րոպէն է հին տարւոյն .
Ձեռ ուզեր դու ոսկի նարինջ...
Բաց ինձ, բաց ինձ, մանուկ սիրուն» :

ՄԱՆՈՒԿ

«—Երջանկութեան

Յոյսերով լի

Քեզ կը բանամ

Ո՛վ նոր-տարի» :—

(կը բանայ) :

ՈՒՐԻՇՆԵՐ

«—Ողջո՛յն, ողջո՛յն, ո՛վ Ամանոր» :—

ՆՈՐ-ՏԱՐԻՆ (Շուրջը նայելով)

Հրճուանք ու խինդ ամէնուրեք
Ո՛ւր ինձ այստեղ բազմոց դըրիք» :—

ՄԱՆՈՒԿ (Բեմը ցոյց առելով)

«—Այն տե՛ղ, ահա՛» :—

ՆՈՐ-ՏԱՐԻՆ (Պատկերը տեսնելով)

«—Ի՛նչ մեծ պատկեր .

Քեզ կը նային ամբողջ դարեր...»

Դո՛ւ որ կենաց ընթացքդ արի
Այս աշխարհում կատարեցիր
Եւ երկրի վրայ գործեր բարի
Սուրբ յիշատակ քեզ թողուցիր :

Եւ երկնային այդ բարձրերէն
Որդեգորով կը նայիս արդ ,
Այսչափ որդւոցդ սրտերէն
Քաղել սիրոյ կարմրագոյն վարդ :

Ես հոգւովըս չիրմիդ մօտեր
Սաւառնաթեւ թըռած թեթեւ ,
Պիտի կանչեմ .— «Տուր ինձ ո՛վ Տէր ,
Ամպը քըչել սարի ետե :

Եւ իր բարի , սուրբ յիշատակ
Անջինջ պահել մանկանց սրտին ,
Դրօշմով անեղծ , խորաքանդակ .
Այս կ' ուխտէ արդ քեզ Նոր-տարին» .
(Դառնալով մանկան)

Կրնա՞մ աստի ճամբայ հորդել» :—

ՄԱՆՈՒԿ

«—Այո , ուղիղ բարձրացիր վեր :
Միթէ կուզե՞ս առաջնորդել» :—

ՆՈՐ-ՏԱՐԻՆ

«—Տա՛ր զիս , տա՛ր զիս

(Բեմի վրայէն)

Ո՛վ սրբութեան տուն և տաճար ,
Հիմունքդ թող միշտ անկործան
Մընայ յաւէտ դարուց ի դար» :

ՄԱՆՈՒԿ

«—Երկինքը թող լըսէ քո ձայն :
Աստի կարող ես դու գիտել» :—

ՆՈՐ-ՏԱՐԻՆ (Բեմէն)

«—Ի՛նչ բազմութիւն...»

Ողջոյն ձեզի վափկասուն

Շնորհալի տիկիներ ,

Եւ ձե՛զ և ձեզ նոր ողջոյն

Նազեւաշուք աղջիկներ :

Եւ ձե՛զ ողջոյն պարոններ

Ձե՛զ զուարթագէ՛մ ու կայտառ

Սիրասընունդ մանուկներ ,

Պատանիներ խանդավառ :

Եւ դուք որ աստ էք բոլոր ,

Ձեզ ալ ողջոյն սիրային

Սպիտակափառ Ամանոր

Ողջոյն կուտայ ամէնին :

Ձեզ բերել է նուէրներ ,

Նորոյ կենաց աւետիք ,

Յերկնից հաւատ , խինդ ու սէր ,

Երջանկութեան մեծ բարիք :

Փափկածըղի վարդի պէս

Ծաղկեցէ՛ք դուք ծոցիս մէջ ,

Երկնից պայծառ լոյսի պէս

Շողշողացէ՛ք սրտիս մէջ ,

Մինչև արեւս ալ ի մայր

Սարի ետե խոնարհի

Նոր-Ամանոր սիրամայր

Դայ տալ ողջոյն աշխարհի» :—

Գ. ՊԱՏԿԵՐ

«Բարո՛վ եկար , Ա՛մանոր» :—

«—Ո՛վ մեզ բերեց ուրախ օր ,

Ո՛վ մեզ տըւաւ նոր նարինջ .—

—Մեր նոր-տարին , Ամանոր ,

Տըղա՛յք , ասե՛նք շնորհաւոր :

Ո՛վ մեր սրտին բերկրութիւն,
Ո՛վ մեզ բաշխեց անուշ միրգ .—
—Մեր նոր-տարին, Ամանոր,
Ուտե՛նք, ասենք Շնորհաւոր:—

Ո՛վ կուտայ մեզ նոր լոյսեր,
Սովորելու նոր բաներ .—
—Մեր նոր-տարին, Ամանոր,
Տըղայք, ասենք Շնորհաւոր:

Ո՛վ խօսք կուտայ նոր դարուն
Մեզի բերել ծաղկալից .
Եւ ամառուան պերճութիւն
Ոչնան օրեր պողալից,

Եւ սիրեցեալ մայրիկիս
Երջանկառիթ կենաց օր,
Եւ սիրեցեալ հայրիկիս
Յաջողութիւնք նորանոր:

Եւ ի՛նձ եւ ի՛նձ նոր արեւ,
Ո՛վ ինձ կուտայ նոր բարեւ .
—Մեր նոր-տարին, Ամանոր,
Մէկտեղ ասենք Շնորհաւոր:

Եւ մրգալից կուգայ մեզ
Ծիծաղադէմ ժրպիտով,
Երևենք իրեն ասենք հեղ
— Բարո՛վ եկար Ամանոր:»—

ԿՈՐԻԻՆ ՄԿՐՏԻՉՅԱՆ

(Նանգուցեալ)

(1 յունուար 1892)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՐԵՐ

Վերջացող շաբթուան առաջին կիսուն
մէջ, այսինքն մինչև չորեքշաբթի, հեռագրա-
կան գործակալութեանց հաղորդած լուրերը
գլխաւորաբար կը վերաբերին այն ճակատա-
մարտին որ փետրվ. 12ին (Ն. Տ.) տեղի ու-
նեցած է Բորդ. Արթուրի առջև և որու մի-
ջոյնն ռուսական երեք թորփիլանաւեր ըն-
կըղմած են՝ բերդերէն արձակուած ռումբե-
րէն, չփոթութեան մը հետեւանօք. նոյնպէս

ճարտնական փոխադրանաւ մը որուն մէջ
1800 հոգի կային:—Ճարտնական նաւատոր-
մին մեծ մասը Բորդ. Արթուրէն 12 մղոն հե-
ռու կը գտնուի և կը պատրաստուի դարձ-
եալ յարձակիլ և զօրք ցամաք հանելու նոր
փորձ մ'ընել:

* * * Ճարտն հիմայ ինքզինքը ազատ կը
համարի Բորէաի մէջ և զօրագունդ մը զըր-
կեց Սէուլ որ 4½ քիլոմետր երկաթուղիով մը
կապուած է Չէմուլբոյի: Ճարտնական 9 նա-
ւեր՝ 2500 զօրք ունենալով իրենց մէջ՝ Չէ-
մուլսօ հասեր են:

* * * Շահակից Տէրութեանց մտածման գըլ-
խաւոր առարկան Չինու չէզոքութեան խըն-
դիրն է, պատերազմին ծագելէն ի վեր, և
միջադպային դիւանագիտութիւնն անընդհատ
բանակցութեան մէջ է ասոր համար: Պէր-
լինի պաշտօնական չըջանալներուն մէջ կը
հաւաստեն թէ պատճառ մը չիկայ տարա-
կուսելու այդ չէզոքութեան վրայ և չկար-
ծուիր որ Չին օգնէ Ճարտնի կամ Ռուսիոյ:
Չինու չէզոքութեան խնդրոյն նախաձեռնու-
թիւնը Միացեալ Նահանգաց կը վերագրուի:
Ֆրանսական կառավարութիւնը համամտու-
թիւն յայտնեց Մ. Նահանգաց առաջարկու-
թեան՝ Չինու հողային ամբողջութիւնն ու
վեհապետութիւնն անփոփոխ պահելու հա-
մար:

* * * Ռուսիոյ ծովային պաշտօնատուներ նոր
նաւաւարժին մը կը պատրաստէ՝ Ծ. Արեւելք
դրկելու համար, որ պիտի բաղկանայ 4 զրա-
հաւորէ, մէկ թորփիլանաւէ և մէկ փոխադ-
րանաւէ: Համպուրկէ ալ կը հաղորդեն թէ
Ռուսիա երկու մեծ նաւեր վարձեր է՝ ղէնք
և ռազմամթերք փոխադրելու համար ի Վլա-
տիվոստոք:

* * * Ծ. Արեւելքի անգլ. նաւատորմին
ընդհանուր հրամանատար կարգուեցաւ Բ.
կարգի ծովակալ Սըր Ճէրրլա Նօէլ, որ փետր.
12ին ճամբայ ելաւ Մարսիլիայէն դէպի Հոնկ-
Գոնկ ուր իր ծովակալի նաւը պատրաստ
պիտի ըլլայ:—Մանչուրիոյ ռուսական բանա-
կին սպարապետ անուանուեցաւ զօրավար
Լինէվիչ: Դիրիլ և Պօրիս մեծ-դուքսերը պա-
տերազմի վայրը կերթան Բեդերսկուրկէ:

* * Փետրվ. 14ին, Ճարոնական աղբիւրէ հեռագիր մը ծանոյց թէ ռուսական երեք յաճանաւ օդը ելեր են Ջան—Կարուի նեղուցին մէջ, Ճարոնցիներուն կողմէ դըրուած ընդծովեայ ականներուն զարնուելով :

* * Լոնտոնի մէջ առ այժմ չեն մտածեր Ճարոնի յաղթուելուն վրայ. բայց կը հաւաստեն թէ Անգլիա չպիտի հանդուրժէ որ Ճարոն ի դէպ պարտութեան՝ չափազանց ընկճուի : Յայտնի չէ թէ Ճարոնի պարտութեան պարագային անգլիական միջամտութենէ մը յառաջ գալիք կնճռոտութեանց նըկատմամբ կանխապէս բանակցութիւնք տեղի ունեցած են թէ ոչ : Բայց տարակոյս չկայ որ Ճարոնցիներուն ծանր մէկ պարտութենէն անմիջապէս ետքը այս խնդիրն աւելի պիտի հրահրի և սուր հանգամանք մը պիտի առնէ դիւանագիտական շրջանակներու մէջ :

* * Միջազգային օրինաց համեմատ, Խըտիվը փետր. 11ին հրահանգ ղրկեց Եգիպտական նաւահանգիստներու պաշտոնեաներուն՝ թէ պատերազմիկ կողմերուն նաւերը կարող են այդ նաւահանգիստներէն հանքածուխ առնել, բայց ա՛յնչափ միայն՝ որչափ հարկ է հասնելու համար առաջիկայ ամիսային կեդրոնը՝ Խտիվը՝ ըստ օրինի՝ պատուիրեց նաև որ պատերազմիկ կողմերուն նաւերն ըստ կարի չուտ անցնին Սուէզի ջրանցէն, առանց կանգ առնելու ջրանցին մէջ : Ո՛չ ի Բօր Սայիտ, ոչ ի Սուէզ, 24 ժամէ աւելի կենալու չեն, և այս նաւահանգիստներէն մեկնելու չեն մինչև որ հակառակ կողմին նաւուն մեկնելէն ետքը 24 ժամ անցած չըլլայ (որպէս զի ջրանցին մէջ կամ մօտերն իրարու զարնուելու հաւանականութիւնը չունենան) : Սուէզի ջրանցին ամուխի վաճառատուններուն իմաց տրուեցաւ որ պատերազմիկ կողմերու նաւերուն անուխ տալու չեն, առանց տեղային իշխանութեանց գիտութեան :

Հինգշաբթի օրը, Պաքուէն հեռագիր մը ծանոյց թէ քաղքին Հայոց եկեղեցիին մէջ

աղօթքներ կարդացուեր են ռուսական բանակին յաջողութեանը համար : — Ռուսիոյ բոլոր քաղաքներուն մէջ աշխատանքներ բացուած են ուր կիները վիրակապ ևւայլն կը պատրաստեն հիւանդանոցներուն համար : Բեդերսպուրկի և Ռուսիոյ զանազան քաղաքներուն մէջ հայրենասիրական ցոյցերը կը շարունակուին ի նպաստ պատերազմին :

* * Թօքիոյէն կը հեռագրեն Փետր. 17ին, թէ ճարոնական թորիլիանաւեր յարձակիւր են ռուսական նաւաբաժինի մը վրայ. Բօրդ-Արթուրի մօտ : Ռուսական նաւ մը մնատուր է : Սէուէն ալ կը հեռագրեն թէ Կէնզան համախմբուած Ճարոններուն թիւն է 100,000, որոնք կը պատրաստուին Մանչուրիա արշաւելու : Ճարոնական ութը փոխադրանաւեր՝ շինուորներով՝ եւ ուրիշ նաւեր ճամբայ ելիւր են դէպի Բօրէա :

* * Պրանսական Կարմիր Խաչի ընկերութիւնը 250,000 ֆր.ի գումար մը կը յատկացնէ Ռուսիոյ ու Ճարոնի վիրաւորեալներուն համար : — Ռուսեւէլինական Պանքային Բարիզի ճիւղին կողմէ 36,500 ֆր.ի նոր գումար մը հաւաքուեցաւ ռուսական բանակին վիրաւորեալներուն համար : — Պրանսական Տ'Ասա երկրորդ կարգի զրահաւորը՝ չորս թորբիլահալածներու հետ Ծ. Արեւելք կ'ուղեւորի :

* * Վերսալահութեամբ կը ծանուցուի թէ Գերմանիա առաջարկեր է Ռուսիոյ՝ օդնկ իրեն, փոխարէն պահանջելով կարգ մը արտօնութիւններ կամ մենաշնորհներ Ծ. Արեւելքի մէջ :

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տ. Սահակ Վրդ. Ռտապաշեան, որ մայրաքաղաքս կը գտնուի՝ անձնական տկարութիւնը դարմանելու համար, մէկ օրինակ տարեկան Մասիս նուիրեց Սերաստիոյ ազգավարժարանին :

Արժանեք Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱ Օրագրի



ՌՕՍՒԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՖ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուլազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿեԱՆՖի վրայ, եւ ՀՐԴԵՀի, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԴՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ-ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՒՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՅՈՐՈՒՆԸ ղէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,666,667	Ֆրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	137,300,000	»

Ընկերութեան ապահովագրուողներուն վճարուած դրամա- գլուխ եւ վնասուց հատուցում	282,000,000	»
---	-------------	---

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս	54,000,000	»
--	------------	---

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան
խան, Վոյվոտա, Ղալաթիա,

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԵՅՔՕԶ)

ԱԽՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ աղբիւրին ջուրը, ախորժակամ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքիս ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատկութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Արէռի տարրալուծած է զայն եւ Թաշաէլէնի ու Գաշլըգաւաքի ջուրերէն գերազանցապէս լուազոյն դասած է, ստուգելով որ անոր ջրաչափական աստիճանը 10 է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարուած Թեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիչերը ու տակառները հոն լեցուելով ու զմուտուելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐին գերընտիր ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քիմիագէտ Տօքթ. Մանիէզատ, հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տ. Լըա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուչի, Զէրրի, Սթէքուլի, Ավիլիանօ, Մալլի, Միրապէլ, Բանայօթ պէյ, Պալիախ, Բարաքօվաքի, Բլէմօվ, Մօրթման, Տէլլասուտա Փայիգ փաշա եւ Սիմօնֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, Մեծ-Փողոց, Հալէպ Խան, Թ. 7:— ՊՈԼԻՍ, Սիրքէնի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիյէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն դատ, Բաբաքուլաքի ջուր: Գինները շատ աժան են՝ ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար: Փորձի համար չիլ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇի ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի գտնէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն այսուհետեւ:


ՀԱՅԻՍՏԱՆԻ

ՕՍՄԱՆԵԱՆ ՇԱՐԱՐԱՌՈՐԻ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանօթ չաքարավաճառը՝ Բերայի չիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իրեւ բաթխարոյ եւ թէ՛ իրեւ չաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր քաղմաթիւ յաճախորդները: Ամբան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ դիչեր:

ՀԱՅԻ ՄՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ոչ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:



Անկարեւոր է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՐԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԱՐԱՌՈՐԻ ԲԵՐԱՅԻ
ՄԱՍՆԱՎԱՐԿԱՆ

- | | | |
|---------|---|---|
| ԲԵՐԱՅԻ | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին. |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԱԻԻՏԱՐ | | 2արչը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարելաւ երաւարտութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՈՒԹ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

(ՎԿՂՅԵԱԼ ԲԱՐԻՉԷ)

Մ Ա Ս Ն Ա Գ Է Ց

կանանց հիւանդութեանց, մանկաբարձ.

վիրաբոյժ

Բերայի դարմանատունը փոխադրած է՝
կրկին, Բերա Սազըզ Աղաճ փողոց, թիւ
26, ուր հիւանդներ կ'ընդունի ամէն օր
կէս օրէն վերջ ժամը 1—4 (Ը. Ե.) :

Ժամադրութեամբ՝ կէս օրէն առաջ :

Կարօտ հիւանդները կը դարմանէ Բե-
րայի (Սր. Երրորդութեան եկեղեցւոյ)
Աղքատախնամի դարմանատունը՝ ամէն
հինգշաբթի՝ առաւօտէն մինչեւ կէս օր :

Մանօթ. — Վիրաբուժական, ուղղա-
մարզական (orthopédique), ծննդաբերա-
կան եւ ամէն կերպ արգանդի հիւանդու-
թեանց շատ կարեւոր գործողութիւնները.
ենթականերու տուններուն մէջ՝ կատար-
եալ ապահովութեամբ եւ մեծ յաջողու-
թեամբ կարենալ կատարելու համար՝ զի
տական ամենավերջին մեթոտներու հա-
մապատասխանող կատարելագործեալ գոր-
ծիքներու մանրամասն ամբողջութիւնը
ոգացուած է :

ԿԱՐԱՊԵՏ. ԷՖ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգ-
մանած գիրքերէն հետեւեալները կը գըտ-
նուին Պաղատալեան գրատունը եւ մայրա-
քաղաքիս միւս հայ գրավաճառներուն քով :

	հասոյ	դրո
Կարմիր մարդոց երդումը	2	10
Ընտանեզուրկ	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին տղան	3	15
Հանրակառքին ոճիրը	1	5
Սկզբունք Բաղ. Տանեսութեան	1	4
Ընտանեկան գողտիքներ	3	15

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Թ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Հեռագր. Հասցե՝ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ -- ԿԻՐԱՍՈՆ
Գնում եւ վաճառում, ներածում եւ ար-
տածում ի հաշիւ :

Բացարձակ պայման՝ ԿԱՆԽԻԿ :

Յանձնառողէքը պիտի գնահատէ յաճա-
խորդը : Կրկնապատիկ կը տուի մ' եւ է
փնաս, որ արդիւնք ըլլայ գործակալութեան
անհոգութեանը, Հրապարակի մասին պահան-
ջուած ծանօթութիւնք փութով կը զրկուին,
եթէ 1 շաբ. նոց փուլ ներփակուի : Յայտա-
գիրը կը զրկուի պահանջողներուն : Դիմողը
երբեք չի փնասուիր. ընդհանրապէս :

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճիշտ եւ աւելի
խնամով պատրաստուած եւ արդէն հրատարակուած է

Պարզ լաքակազմ 3 դր.
Ընկիր լաքակազմ 5 »
ՈՍԿԵԶՈՐ ՓԱՌԱԿԱԶՄ 8 »

{ 25 օրինակէն աւելի գնող-
ներուն գոնացուցիչ գեղջ

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավաճառներու եւ քրթա-
վաճառներու քով : Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ,

ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՋՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԴՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճակս)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՐԻՍ ԼՈՒՐ ՏԵ ՊԱՎԻԹ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդգրկմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Բուէի Լիօն

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԸՆԿ. ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը ճեմ մինչեւ 11 1/2

Երակի օրերը ժամադրութեամբ

ՁՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆԻ Ձինստանէն, Հնդկաստանէն,
Ճաւայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
քաւր, հոսաւեհ եւ առողջաւար թէյերէն,
որոնք ձերան եղանակին յարմարագոյն ըմ-
պելիննի:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէ Գափու,
ճէլալ պէյ խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս եգիպտոս:



ՏՕԲ. Ն. ՏԱՂԱԲԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Գիտական շարժում	Բ. տարի (188)	20
» » »	Գ. » (1887)	20
Բնական Պատմութիւն	Ա. հատոր (Կեդ.	
Հիւսուածքանութիւն եւ Մարդկային		
Կազմախօսութիւն ու Բնախօսութ.	Դաս	
սագիրք երկրորդական վարժարանաց		40
Նախորդին համառօտը. Դասագիրք Նա-		
խակրթարանաց		8
Ծագումն հայ առօրից (Պատկեալ Իզմիր-		
եանց մրցանակաւ)		10
Մանրէաբանութիւն		10
Տիեզերք եւ իւր կազմութիւնը (Ֆրանս)		10
Առողջապահութիւն		25
Մանրական Գործարարք (Կազմախօսու-		
թիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութ.		6
Մարդկային Սաղմնախօսութիւն		5
Բառացուցակ Ախտաբանանց, Բ. Տիպ.		3
Տարուինականութիւն, Գ. Տիպ.		3

Կեդրոնաւեղին Կ

Մատենոսեան Տպարան, Ֆիննանճըլար, Կ. Պոլիս